

**ԱՍՏՕՌԻՆ ԳԱՆԳԱՏ ԳՆԱՅՈՂ ՄԱՐԴԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ըլում ա, չի ըլում՝ մի մարդ: նա ո՛նչ կնիկ ա ունենում, ո՛նչ ըրեխա, մենակ իր գլուխն ա ըլում:
Հմա էն դայդի ըլարկոտ ա ըլում, որ պեճն աչքին դնեիր, տեղիցը ժաժ չէր գալ: Որ տենում ա սովիցը մեռնում ա, մահը բզին չոքել ա, միտք ա անում, որ գնա աստծուն գանգատ, որ նա իրան անբախտ ա ստեղծել, հմի իրան ռազի անե:

Ճամփեննի գնալիս նրան մի Գել ա ռաստ գալիս:

— Բար աջողում, ա՛յ ճամբորդ աղբեր,— ասում ա Գելն էս մարդուն,— խե՛ր ըլի: ո՞րդի ես գնում:

— Բարու տեր ըլիս, Գել աղբեր,— ասում ա ճամփորդը,— գնում եմ աստծու կուշտը գանգատ, որ ինձ անբախտ ա ստեղծել:

— Թե բու աստոճը կսիրես, եք աստծու կուշտը հասնուս, աստոճ մուրագդ տա, ինձ էլ միտդ բի, ասա, որ ճամփին մի խեղճ Գել ես տեհել, գլխացավիցը գիդե ոչ, թե ի՞նչ անե, տես սրան ի՞նչ ճար կա:

— Աչքիս վրա, Գե՛լ աղբեր,— ասում ա մարդն ու իր ճամփեն գնում:

Շատ ա գնում, թե քիչ, նրան մի Բղմանչի ա ռաստ գալի:

— Բար աջողում, ա՛յ ճամբորդ,— ասում ա Բղմանչին,— խե՛ր ըլի, էդ ո՞րդի ես գնում:

— Բարու տեր ըլիս, Բղմանչի աղբեր,— ասում ա ճամբորդը,— գնում եմ աստծու կուշտը գանգատ, որ ինձ անբախտ ա ստեղծել:

— Թե քու աստոճը կսիրես, եք աստծու կուշտը հասնուս, աստոճ մուրագդ տա, ինձ էլ միտդ բի. ասա, որ ճամփին մի խեղճ Բղմանչի ես տեհել, ասա՛, որ ճանճերն ու կրեսնին, հաղողը հասնում ա թե չէ, ուտում են. ես էլ մի քյասիք մարդ եմ, կարում չեմ յուլա գնալ. սրան ի՞նչ ճար կա:

— Ալքի՛ս վրա, Բղմանչի աղբեր,— ասում ա մարդն ու իր ճամփեն գնում:

Շատ ա գնում, թե քիչ, նրան մի Էժ է ռաստ գալի:

— Բար աջողում, ա՛յ ճամփորդ աղբեր,— ասում ա Էժը.— խե՛ր ըլի, էդ ո՞րդի ես գնում:

— Բարու տեր ըլիս, Էժ աղբեր,— ասում ա մարդը,— գնում եմ աստծու կուշտը գանգատ, որ ինձ անբախտ ա ստեղծել:

— Թե քու աստոճը կսիրես, եք աստծու կուշտը հասնուս, աստոճ մուրագդ տա, ինձ էլ միտդ բի. ասա՛, որ ճամփին մի Էժ տեհա. պոզերն էնըղար վենձացել են, որ երգնքին դեմ են էլել, էլ կարում չի գլուխը կռացնել ու խոտ բածել: Սրան ի՞նչ ճար կա: Թե որ կուզես, արի ես չոքեմ, մեջքս ի՛լ ու պոզերովս բձրացի աստծու կուշտը:

Էս խոսքն ասում ա Էժը, չոքում, մարդը նրա մեջքն ա ըլում, պոզերովը բձրանում, գնում աստծու կուշտը: Հնգնում ա աստծու ոտներն՝ դաչում, պղատում, որ իրան ռազի անե:

Աստոճն ասում ա.— Գնա՛, քու փայ դովլաթը ես դրկել եմ: Եղին գնա, որ եղնեն հասնուս:

Իժի հմա մի սղոց ա տալիս, որ պոզերը սղոցե: Բղմանչու հմա ասում ա, որ իրան բաղը բղփորե, խազինա կզոնու: Գիլի հմա էլ ասում ա, որ ճամփին մի շաշ մարդ կզոնու, նրան վերկոխե ուտե, գլխի ցավը անց կկենա:

Էս մարդն աստծուց շնորհակալ ա ըլում, վեր ա ունում սղոցն ու Իժի պոզերովը դվեր գալիս:

Եք որ գեղնին ա հասնում, սղոցով Իժի պոզերը կտրում ա ու ճամփա ընգնում վազում:

Գալիս ա գալիս, հասնում ա էն Բղմանչուն: Բղմանչուն ասում ա, որ իր բաղը չիմ մի լավ արիմարե, բղփորե՛ խազինա կզոնու:

Բղմանչին ասում ա.— Ա՛յ աղբեր, եբոր էդ դայդի լավ խաբար բերիր ինձ հմա, արի իրուր հետ փորենք, ինչ որ գդնունք, կիսումը կես անենք՝ կեսը քե, կեսը ինձ:

— Չէ՛, Բղմանչի աղբեր,— ասում ա մարդը,— ես դրա վախտը չունիմ, իմ դովլաթն աստոծ դրկել ա, ես պետք է վազեմ, որ եղնեն հասնում:

Շատ դաշուկդատում ա էս Բղմանչին, որ էն մարդը կանգնի, իրան քոմագ անե, դադած փողը կես անեն, հմա մարդը լսում չի, տալիս ա անցկենում:

Գնում ա գնում, Գելն ա ռաստ գալիս: Գիլին ասում ա, որ ճամփեննի մի շաշ մարդ գնալիս կըլի, նրան վերկոխե, ուտե՝ գըլխացավը անց կկենա:

— Եբոր իմ ցավին դարման բերիր, շատ շնորհակալ եմ, ա՛յ աղբեր, ասում ա Գելը, բաս քու դովլաթն ո՞ւր ա:

— Իմ դովլաթը գնում ա, ես պետք ա եղնեն վազեմ, որ հասնում:

Երբ որ մարդը մի քիչ հեռանում ա, Գելը եղնեն դի ա տալիս, որ կանգնի: — Դու ուրջի հմա չըչարվում ես ու պարապ տեղը ճամփեննի վազում, քիանից էլ շաշ մարդ ես ո՞րդի պտիմ ճարել:— Էս ասում ա ու վեր կոխում, ուտում մարդուն:

Աստծանե իրեք խնձոր կաթի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ ըշխարին: